

տեսական, սոցիալական երևոյթի, ժողովրդական աղէտի, որ ցոյց է տալիս թէ ինչու Ֆրանսիան իւր փրկութիւնը որոնում էր կորսիկեցի «կոնգրտիէր» գրոշակներէր տակ, Բայց դրա փոխարէն միւս կողմերը մնացին ստուերում: օրինակ՝ սահմանադրական ժողովի մեծ օրէնսդրական գործը, որ հիմնուեցաւ ազատութեան և հաւասարութեան սկզբունքները կեանքի մէջ անցկացնելու համար—որ երկու տարուայ մէջ «Ֆէօդալական» Ֆրանսիան դարձրեց «ժամանակակից»:

Իրեւելից կարգաւորութիւն պէտք է առել, որ գիտական մեթոդը նոյն արդիւնքները տուաւ պատմութեան մէջ, ինչպէս և հոգեբանութեան: Ինչպէս հոգեբանութեան հիմնական գաղափարը—մարդկային է—փոխուեց, դարձաւ «անցքերի մի շարք» une file d'évenements,—այսպէս և 1789 թուի անցքը դարձաւ անցքերի միջոցով և նորա միջի հոգին դուրս թռաւ, նա կորցրեց այն, ինչ որ նորան տալիս էր անհատական բնաւորութիւն, հրապոյր և ազդեցութիւն, այսպէս ասած՝ պատմական «նշաններ»: «Գիտական մեթոդի» գործադրութիւնը յեղափոխութեան պատմութեան վրայ՝ խորը հետք կը թողնէր պատմագրութեան մէջ՝ նա ոչ միայն հարստացրեց և խորացրեց այդ անցքի մասին մեր ունեցած տեղեկութիւնները, այլ և նա անհնարին դարձրեց հետաքրքրական պատմագրութեան նախկին եղանակները: Ինչ վերաբերում է անցքի և նորա գործիչներին գնահատութեան, նշանակելի է, որ այս նկատմամբ «դուական (պոզիտիվ) պատմագրութիւնը» իւր բացասական քննադատութեան շատ կէտերում համաձայնեց «իդէալիստիքականի» հետ: Տէնի յեղափոխութեան պատմութեան երևան գալուց շատ առաջ՝ իդէալիստիքական պատմագրութեան փայլուն ներկայացուցիչներէց մէկը՝ հերոսների պաշտամունքի առաքեալ Վարլէյը իւր յեղափոխութեան պատմութեան մէջ կարծես վաղօրօք՝ ձեականերպէլ էր Տէնի բոլոր դրութիւնները: Այն Փիլիսոփայութիւնը, որ ծագեցրեց յեղափոխութիւնը և առաջնորդեց նորան, Վարլէյի ասելով՝ դուռ կործանիչ բնաւորութիւն ուներ Ռուսսօյի փոխ առաջ «մարդու իրաւանց» թէօրիան ներկայացնում էր լոկ «տրամաբանութեան մի խաղ՝ իմաստակի հնարագործութիւն, նոյնքան անտեղի, որքան անկանոն բայերի թէօրիան»: Իշխող բարոյագիտութիւնը հիմնուած էր եպիկուրեիզմի վրայ և ամփոփում էր իւր մէջ ընդհանուր երանութեան խոստումն Անհաւատութիւն, դատարկ բարբառներ, զգայականութիւն—սա այդ ուշագործի զսպանակները՝ նա արձակեց բնազդմանց սանձերը և խորտակեց բոլոր պատուարները: Անբարոյականացած իշխանութիւնը փո-

խարինուեց անամօթ անիշխանութեամբ: Ինչի՞ կարող էր հասցնել ֆրաչեօր անաստուածների խորհրդով շարժուող վայրենացած ռամիկների ժակերիաները կործանումը գլխաւորուեց, բնաւ վրայ մնացին հինգ զգայարանք և ինչէ՞րէք, անկշտումը—փառամոլութիւնը, Մարդու ամբողջ դէմոնական բնութիւնը երևան եկաւ արդ—աշխարհ—և դորա հետ միասին «մարդակերութիւնը»: Առաջ բերելով կարլէյեան քննադատութեան այս ուղին ու ծուծը, Տէնը նորա կրիտիկոսը դառնալով, շարունակում էր. «Աւելացրէք, սակայն, լաւ կողմը վատի վրայ և ցոյց տուէք արժանաւորութիւնները արատների հետ միասին: Այդ սկիզբունքները հաւատում էին միայն ապացուցուած ճշմարտութեան և միայն նորան էին կամենում պաշտել: Այդ տրամաբանները հասարակութիւնը հիմնում էին արդարութեան վրայ և աւելի մեծ պատրաստականութեամբ իրանց կեանքը վտանգի կենթարկէին, քան իրանց ստեղծած վարդապետութիւնից կը հրաժարուէին: Այդ էպիկուրեանները իւրեանց համակրութիւններով ձգտում էին գրկել ամբողջ աշխարհը: Այդ գաղաւթները, այդ բանուորները, այդ ժակերը անհաս և անշուր, կուռում էին սահմանի վրայ մարդկային շահերի և վերացական սկզբունքների անունով: Անհանձնութիւն և ոգևորութիւն պոստիւ աւելի պակաս չի եղել, քան ձեզ մօտ, միայն նորա արտայայտուել են ձեզ բոլորովին անծանօթ ձևերով: Նորա նոյնպէս են սիրում եղել վերացական ճշմարտութիւնը, ինչպէս ձեր պուրիտանները աստուածային ճշմարտութիւնը, նորա նոյնպէս են հետեւել կրօնին և ձգտել են ընդհանուր բարօրութեան, ինչպէս պուրիտանները ձգտել են անձնական բարօրութեան, նորա նոյնպէս են կուռել հասարակաց շարի դէմ ինչպէս ձեր պուրիտանները՝ ոգու շարի դէմ: Նորա նոյնքան վեհանք են եղել, որքան վերջինները՝ առաքինի: Նորա էլ ոչ նուազ հերոսութիւն են ունեցել, բայց աւելի համակրելի, դիւրընտել, ամեն բոլոր պրոպագանդայի պատրաստ, Եւրոպան վերանորոգող հերոսութիւն, մինչդեռ ձերը միայն ձեզ է ծառայել»:

Ե. ՄԱԿԱՅԵԱՆ.

ՊԱՅՏՈՆԱԿԱՆՔ

«ԲԱԼՈՒԱԾԻ ԶՈՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈՒԻ

29 Ապրիլի Սինոդն Ս. ԼՄԺԻԿԻ Ի ՆԿԱՏԻ առաւ գրութիւնն Կառավարութեան Կովկասեան շրջանի ճանապարհաց հաղորդակցութեան յանուն Նորին Վեհափառութեան, որ է այս «Ի հաւաքածոյս կանոնադրութեանց

և կարգադրութեանց պետութեան ի 1 Մարտի այսր ամի Թ. 28 յայտարարեալ է անուանական ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրաման՝ տուեալ յանուն նախարարի հաղորդակցութեան ճանապարհաց ի 1 փետր. այսր ամի վասն գնելոյ զ88 դեսետին 660 քառակուսի սափէն հողոց յաղաքս շինելոյ զճանապարհ ի քաղաքէ Ախալքալաքայ մինչ ցտահմանն կարուց հաշանգի որ ի գաւառին Ախալքալաքայ Տըփիտեաց նահանգի քաղաքելոյ ի կարգախ գեղջ խրճիթ մի Առաքելոյ ընդ սմին զծրագիր ճանապարհին և զքաղաքէ ի ցուցակէ վասն քանակութեան հողոյ որ ըստ զօրութեան վերոյգրեալ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հրամանի պարտ է ընկալնու ի կալուածոց վանացն Էջմիածնի կառավարութիւն ի վերայ հիման 577 յօդ. X հատ. I մասին քաղաք. օրինաց 1887 ամի պատիւ ունի խոնարհաբար խնդրել ի Զերդ վեհափառութենէ յայտնել կառավարութեանս գտեղեկութիւն վասն վերջնական գրնոց հողոց որք ընկալնոց են ի կալուածոց վանուցն Էջմիածնի վասն ճանապարհի՝ քանակութեամբ 120600 քառակուսի սափէն կամ 50 դեսետին 600 քառ. սափէն, ցուցանելոյ յայտնի տեղեկութեան զգինս վասն իւրաքանչիւր դեսետին հողոց:

Սինօզն Ս. Էջմիածնի ըստ բարեհաճ կամաց Սրբազնագոյն Հայրապետի ամենայն Հայոց հրամայեց «զօրոշումն գնահատութեան վերոյգրեալ հողոց թողուլ ի կամս կառավարութեան հաղորդակցութեան ճանապարհաց կովկասեան շրջանի»:

2 Մայիսի. Ս. Էջմիածնի Սինօզն ի նկատի ունենալով Հառիճոյ վանքի վանահայր Հմայեակ վարդապետ Տեր Յարութիւնեանցի խընդիրը՝ արձակեց նրան իւր պաշտօնից և կարգեց վանահայր Անուայ վանքին ի տեղի հանգուցեալ Ներսէս վարդապետի:

11 Մայիսի. Սինօզը Աստրախանի կոնսիստորիայի խնդրանաց համեմատ արձակեց կոնսիստորիայի Անգամութեան պաշտօնից Մխի-

թարեանց աւագ քահանային՝ որ արդէն դադարած էր քահանայագործութենէն ծերութեան և տկարութեան պատճառաւ:

13 Մայիսի. Բեստարարիայի կոնսիստորիայն մեղադրելով Սիմֆերոպոլի Մարտիրոս քահանայ իւզբաշեանցին զանազան անլուր յանցանքների մէջ՝ դադարեցրել էր նրան քահանայագործութիւնից և խնդրել Սինօզից՝ որ նորան իսպառ հեռացնէ այն քաղաքից: Սինօզը այդ անբաստանութեան գործը թիրի գտնելով՝ վերստին քննութեան ենթարկեց և օրինական քննութեան արդեանց համեմատ իւր օրագրով անպարտ ճանաչեց իւզբաշեանց քահանային նորա վերայ բարգուած յանցանքների մէջ, իսկ անձնասպանութեան փորձի համար, որին նա զիմել էր յուսահատութեամբ՝ յանիրաւի մեղադրուած և պաշտօնից զրկուած լինելով, ենթարկեց նորան ամսօրեայ ապաշխարութեան՝ թոյլ տալով ապա շարունակել իւր քահանայութիւնն:

20 Մայիսի. Սինօզը ի նկատի ունենալով Ներքին Գործոց Նախարարի առաջադրութիւնը այս օրինակ. «Բարձրագոյն հրամանաւ ի 11 Մարտի 1889 ամի՝ որ հրատարակեալ է ի 43 համարի ժողովածուի օրինաց և կարգադրութեանց կառավարութեան ի նոյն ամի իրաւունք խնդրելոյ ի կայսերութեան հնագիտական նպատակաւ զպեղումն հողոյ արքունեաց՝ որ սեպհական են զանազան հաստատութեանց և ընկերութեանց տուեալ են կայսերական հնագիտական ժողովոյն: Ամենայն հաստատութիւնք ու անձինք, որք մտադիր են առնել իշխանութեան ընդ այնմիկ ի տեսչութեան որոյ գտանեն վերոյգրեալ հողքն, մտանել յառաջագոյն ի համաձայնութիւն ընդ կայսերական հնագիտական ժողովոյն»:

Եւ տեսնելով որ այս Բարձրագոյն հրամանը ճշտութեամբ չի պահպանում և եղել են խանգարման գէպքեր մինչև անգամ հոգևորականների կողմից, ուստի հրամայեց վերոյ-

գրեալ այս գրութեան մասին ծանուցանել
Հայոց Կոնսիստորիաներին և պատուիրել որ
ճշտութեամբ կատարուի այդ Բարձրագոյն
հրամանը:

23 Մայիսի. Կ. Պոլսի Հայոց Պատրիարքա-
նի վկայութեան համեմատ Տոնկահայտառակ
Բաղէշցի Ղազար Սիրունեանցը պատկուած է
եղել Բաղէշում և թողնելով իւր առաջին
կին Փիրոզը՝ կեղծ վկայականով խաբել է Ու-
ղունքիլիսեցի Յարութիւն քահանային և կրր-
կին պատկուել է Աղէքսանդրապոլցի Հռիփ-
սիմէ Եղիկեանցի հետ. Սինօզը այս կրկնա-
մուսնութիւնը հակառակ գտնելով Հայաս-
տանեայց եկեղեցու օրէնքին՝ հրամայեց նախ՝
անվաւեր համարել Սիրունեանցի երկրորդ
պսակը Եղիկեանց Հռիփսիմէի հետ՝ վերջինին
իրաւունք տալով նորից ամուսնութեան և
երկրորդ՝ պսակադիր Տէր Յարութիւն և Սի-
րունեանցը յանձնել քաղաքային դադաստանի:

23 Մայիսի. Սինօզը ի նկատի առնելով
Կաղզուանցի Յովհաննէս քահանայ Թովմա-
եանցի կողմից վարմունքը իւր կարգակիցնե-
րի հետ՝ այն ևս Աստուծոյ տաճարի մէջ,
հրամայեց ենթարկել նորան եռամսեայ ապաշ-
խարութեան Կարսայ վիճակի վանքերից մէկի
մէջ:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ — ՎԱՐՉԱԿԱՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԷ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ.

Դ Ի Ս Տ Ա.



Եկտեմբերի 3. 1893 թ.,
ուրբաթ երեկոյեան ժամի
8-ին կայացաւ Ուսում-
նարանական — Վարչա-
կան նորահաստատ Յանձ-
նաժողովի Ա. նիստը, նա-
խագահութեամբ հ. Խո-
րէն Ժ. վ. Ստեփանէի և
Յանձնաժողովի բոլոր ան-

դամների ներկայութեամբ՝ հ. Լեոն վարդա-
պետ Խօջայեանի, դպիր Գալուստ Տէր Մկրտ-

չեանի, Յովհաննէս Սաղաթելեանի և Եղիշէ
Սաղաթեանի:

Սախ և առաջ նախագահի առջարկու-
թեամբ ժողովականները յոտնկայս բարեմադ-
թութիւն յայտնեցին, որ կարողանան արդա-
րացնել Վեհափառ Կաթողիկոսի բարձր վըս-
տահութիւնը արգիւնաւոր գործունէութեամբ:

Ապա ժողովը զբաղուեց մի շարք խնդիրներով,
որոնց մասին կարծիքների փոխանակութիւն
կատարելուց յետոյ, ի միջի այլոց կայացրեց
հետևեալ վճիռները:

... Սախագահի միջոցով Յանձնաժողովի
քարտուղարութեան պաշտօնի համար առա-
ջարկել Վեհափառ Կաթողիկոսին երկու
թեկնածու՝ Տիգրան սարկաւադ Տէր Յով-
հաննիսեանին և դպիր Բագարատ Վարդադա-
րեանին, խնդրելով Սորին Սրբութեան բարե-
հաճութիւնը սոցանից մէկին ընդունելու հա-
մար:

Ե. Յուցակագրութեամբ ընդունել նախկին
նախագահից Յանձնաժողովի գործերը, որոնց
համար նոր մատեաններ առ այժմ չբանալ,
այլ շարունակել հենքերը:

Զ. Վեհափառ Կաթողիկոսի հրամանով
շրջաբերականներ ուղարկել վիճակային Կոն-
սիստորիաներին, առաջարկելով այն տեղե-
րում, որտեղ դպրոցական հոգաբարձուների
կազմութիւնը թերի է կամ հոգաբարձուների
պաշտօնավարութեան ժամանակը լրացած է,
շտապեն նոր ընտրութիւններ կատարել և ըն-
տրողական թերթերն անյապաղ ներկայացնել
Վեհափառ Հայրապետին ի հաստատութիւն:

Դ. Առաջարկել թեմական տեսուչներին որ
շուտով հաղորդեն Յանձնաժողովին թե՛ ար-
դեօք իրենց թեմերում ներկայ 1893 թուին
որտեղ, երբ և ի՞նչպիսի դպրոցներ են բաց-
ուել, ճշդիւ նշանակելով զաւառը, քաղաքն
և գիւղը:

Ե. Հայոց դպրոցական դասադրքերի հեղի-
նակներին առաջարկել, որ հաճեն ուղարկել
իրենց կազմած ձեռնարկների իւրաքանչիւր
հրատարակութիւնից երեք—երեք օրինակ, ո-
րոնցից մէկը յատկացնել Մայր Աթոռի մա-